

Դավիթ Վ. Գյուլգատյան (Վանաձոր)

Բանասիր. գիտ. թեկնածու

ՀԱՍԿԱՑԱԿԱՆ ԴԱՇՏ ԵՎ ԱԶԴՈԼՈՐՏ*

Բանալի բառեր - նշանասերում, նշանակում, նշանակություն, իմաստ, նշանակման առարկա, պատկերացում, հասկացություն, դատողություն, ազդակետ, անշարժ սկզբնաշարժիչ, ներգործականություն, կրավորականություն, լեզվասերում, ստորգում, ստորոգիչ, սփոտայական վերնոլորտ:

Մուտք

Լեզվական նշանը՝ ազդարարվում, և լեզուն ամեն անգամ վերարթնանում է մեր մեջ տակավին ներքին խոսքով որոշարկելի նշանակման պահից: Նշանակումն ազդանշան է: Ազդանշան է նշանի գոյության, համակ նշանայնության, նշանոլորտի սահմանակազմության:

Ազգային լեզվի՝ իբրև նշանային համակարգի ակունքը մարդկային լեզվում է, որը սահմաններով նույնական է տրամաբանությանը, քանի որ տրամաբանական հասկացություններն ու դատողությունները համընդհանուր են բոլոր լեզուների համար: Ինչպես ազգային լեզուն է ընդհանրական այդ լեզվով դրսևորվող ամեն խոսքի համեմատ, այդպես էլ տրամաբանությունը կամ մարդկային լեզուն է հանրահաշվական բանաձևի դեր կատարում ազգային լեզուների նկատմամբ: Արդ՝ այս առումով հասկացությունը (նաև դատողությունը) ևս նշան է, որի նշանակելին հասկացությանը ներդրված բովանդակությունն է, նշանակիչը՝ տվյալ լեզվի այս կամ այն միավորը (բառույթը, շարույթը և այլն), որն իր հերթին տվյալ լեզվի հասկացություն է՝ իր նշանակյալի բովանդակությամբ և խոսքում դրսևորելի նշանակչով՝ բառով, շարակցությամբ և այլն: Հասկացությունների բազմության ներունակ տիրույթը անպարփակ հասկացական դաշտ է, որտեղ ներունակորեն առկա են լեզվասերման սկիզբը դնող պրկված ազդանշանները, որոնք գործունանում են նշա-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 10.11.2019:

նական պահից, և որոնց ցանցը կազմավորում է համամարդկայինն ազգայինին, ազգայինն անհատականին ազուցող ազդանշանային ցանց, որն էլ հենց ազդուլորտն է: Համամակարդակայինի ակունքներից սերող նշանակերտ ԲԱՆԸ էացվում է ստորոգմամբ, որի զորութենական նշանը ստորոգիչն է՝ արիստոտելյան անշարժ սկզբնաշարժիչը լեզվում:

1. Նշանակում

Միասնական նշանի եռատումն իր բաղադրիչների՝ գիտական անհրաժեշտ վերացարկում է՝ նյութի մակերեսային տրոհումներով հասնելու խորքային ընկալման ու գնահատման: Նշանը նշան է իր երեք բաղադրիչի ներհյուսմամբ: Սա նշանակում է, որ ոչ միայն նշանակյալն է անբաժան նշանակչից, այլև այդ նշանն արդեն առկայացված է իր նշանակման հարաբերությամբ առ նշանակման առարկա: Լեզվական նշանն այդպիսին է իր լեզվականորեն տրվածությամբ, իսկ տրվածությունն այդպիսին է համակարգային հնարավորությամբ: Մի կողմից՝ լեզվական նշանի բևեռային բաղադրիչները՝ նշանակյալն ու նշանակիչը, **նշանային ներկենտրոն** իրակություններ են, որոնց կապն արտալեզվական իրականության հետ միջնորդավորված է նշանակմամբ: Նշանակումն **արտակենտրոն** ուղղվածություն ունի. այն նշանի հարաբերումն է արտաքին առարկային: Մյուս կողմից՝ հնարավոր է նշանի երեք բաղադրիչի՝ **ներնշանային-ներկենտրոն** իրողություն լինելու մեկնաբանություն: Եթե ասում ենք, որ լեզվական հորինվածքն ինքնին նշան է՝ լեզու և խոսք բևեռներով, ապա խոսքային բևեռով **նշանակում** ենք լեզուն՝ խոսք-նշանակչին վերագրելով **նշանի**, լեզու-նշանակյալին՝ որպես թե **նշանակման առարկայի** դեր²: Այս մոտեցմամբ, ըստ էության, գործ ունենք **զուտ նշանակման** հետ. նշանակվածությունը, ինչպես նշանն ամբողջությամբ, այստեղ տրված է լեզվականորեն: Այստեղ լեզվական համակարգն է իր բառապաշարով, քերականությամբ և խոսքի կադապարով, ասել է՝ հնարավոր խոսքով, ուստի գործ ունենք **ինքնանշանակման** հետ: Արտակենտրոն նշանակման դեպքում զուտ նշանակման գործողությունը լեզվի հարաբերականորեն կայուն վիճակում կարող է պահպանվել մինչև ասացական մակարդակ: Հնչույթները, ձևույթները, բառարանային իմաստով գործածվող բառերը, նշանակման խոսքով պայմանավորված արտակենտրոն ուղղվածությամբ հանդերձ, լիովին համընկնում են ներլեզվական նշաններին, ուստի այս տիրույթում նշված միավորներով ոչ թե նշանակում, այլ **վերանշանակում** ենք լեզվով տրված իրողությունները, թեև բառային մակարդակում իրադրությամբ ստեղծված բառային նորակազմությունները վերստին նորովի նշանակում են ազդարարում: Պետք է նկատի ունենալ, սակայն, որ նորակազմությունների հնարավորությունն ասութա-

2 Հմմտ. Степанов Ю. С., Основы общего языкознания, М., «Просвещение», 1975, էջ 9-10:

կազմ պայմանավորվածություն ունի, որովհետև, որպես կանոն, հաղորդակցումը մակերեսային ստորոգմամբ է իրականանում, և հաղորդակցման ստեղծագործական ուղղվածությունն է թելադրում նոր բառերի ստեղծման անհրաժեշտություն: Ասացական մակարդակում արդեն նշանակումներ ենք անում նորովի՝ վերանշանակման **վերինաստավորմամբ**: Եթե ասում ենք՝ *ինչ-որ բան ինչ-որ բան է*, նշանակման առարկան է-ով նշված *ինչ-որ բան*-ն է, իսկ նշանը՝ *ինչ-որ բանի ինչ-որ բան լինելը*՝ անկախ դրա՝ իրականությանը համապատասխանելուց: Ասվածի լավագույն ապացույցը լեզուներում դարձվածքների բազմությունն է, որոնք հաղորդակցման ընթացքում մակերեսային ստորոգական ձևավորում են ստանում, և որոնց բաղադրիչ բառերից ոչ մեկը բառարանային իմաստով չի գործածվում, իսկ դարձվածային իմաստը ձևավորվում է՝ դարձվածքի կազմում եղած բառերի իմաստներից անկախ, բայց ներքին ձևի թելադրանքով այդ իմաստների այնպիսի ներհյուսմամբ, որ լիովին արդարանում է դարձվածային իմաստակերտումը: Սակայն առանց դարձվածքների կառուցվածքներում անգամ ասույթի մեջ ամեն մի բառագործածություն եթե փոխաբերություն չի էլ պարունակում, ապա գոնե հիմք է դառնում հնարավոր փոխաբերականության: Ասույթի կազմում, պայմանավորված դրա ծավալով, առավել հեշտ է ցույց տալ թե՛ նշանակման, թե՛ լեզվից խոսքին հոգեբանական անցում կատարելու էությունը: Այսպես՝ Եղիշե Չարենցն իր հայտնի բանաստեղծության առաջին տողը գրելիս («Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում») շարադասման մի քանի հնարավորություն ուներ (**Իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում ես*, **Ես սիրում եմ իմ անուշ Հայաստանի արևահամ բառը*, **Սիրում եմ ես իմ անուշ Հայաստանի բառն արևահամ* և այլն): Խոսքի աղբյուրի և տաղաչափության թելադրանքով Չարենցը ընտրել է արարված տարբերակը, որի նշանակման (արտալեզվական) առարկան սերն է (կամ սիրելը) առ անուշ Հայաստանի արևահամ բառը, իսկ նշանը՝ տվյալ բանաստեղծ իր հնչակազմով (գրակազմով) և բովանդակությամբ: Նշանակումը ստորոգական արժեք ունի իր թե՛ ներկենտրոն, թե՛ արտակենտրոն ուղղվածությամբ. առաջին դեպքում լեզուն հարաբերում է խոսքին, երկրորդ դեպքում լեզուն խոսքով հարաբերում է արտալեզվական իրականությանը: Վերջին դեպքում նշանակմամբ է վերահաստատվում նշանակման առարկայի բովանդակությունը նշանակյալի մեջ՝ վերստին հաստեղծվելով դրա նշանակությունն ու իմաստը նրանում:

Վերն ասվեց, որ ասացական մակարդակում է ավելի լավ բացահայտվում նշանակման ընթացքը: Այս մակարդակի միավորի՝ նախադասության կազմավորումը, սակայն, ուղեկցվում է բառակազմության և ձևակազմության ներքին նշանակումների շղթայավորմամբ: Բառակազմական և ձևակազմական կաղապարները համակարգում ննջած հարացույցներ են՝ արդեն՝ ինքնովին նշանակված բաղադրիչ-

ներ: Աստվածակազմության ընթացքում շնչավորվում են այդ կաղապարները՝ ոչ միայն որպես պատրաստի միավորների վերանշանակումներ, այլև արժույթային և հոմանշային ընտրության հնարավորությամբ նորովի՝ նշանակման կրիչներ: Այսպես՝ արժույթայնությունը թելադրում է բառի ձևաբանական կազմավորվածություն՝ օրինաչափ հոլովառությամբ: Բայց կան դեպքեր, երբ օրինաչափականությունը երկակի, երբեմն էլ եռակի հնարավորություն է տալիս: Խոսքի րադրությունը, որ իրադրությունն է նաև տվյալ պահին խոսողի հոգեվիճակի, հայերենում, օրինակ, կարող է թելադրել անձնանիշ և իրանիշ գոյականների ուղղական կամ տրական ձևավորվածություն՝ նաև սպասելիին հակառակ դրսևորմամբ, ներգոյականի համադրական կամ վերլուծական կազմություն և այլն: *Քախարավոր*-ի հակիմաստությունը հայերենի բառային հարացուցում ածանցավորված չորս պատրաստի միավոր ունի՝ *անքախար, դժքախար, ապաքախար, փարաքախար*: Դժվար է պարզելը՝ *քախարավոր*-ի հականիշն անվանելիս խոսողն այդ պատրաստի միավորներից մեկի ընտրությամբն է դիմում, թե՛ ընտրություն է կատարում *քախարավոր*-ի՝ իրադրությանը հարիր *ան-, դժ-, ապ-, փար-* համակցելի նախածանցների միջև և դրանով հաստում նշանակումը: Եթե ընտրության այսպիսի լայն հնարավորություն կա բառակազմության ու աստվածակազմության ժամանակ, ապա որքան ավելի մեծ է հնարավորությունը վերասացական մակարդակում: Վերասույթը լեզվական ազատության ամենից լայն տիրույթն է, որ պայմանականորեն է լեզվական միավոր կոչվում ի հակադրություն նրան նախորդող միավորների: Ըստ էության, սա լեզվին հարաբերակից խոսքի ամենից տարողունակ ասպարեզն է, որտեղ արդեն անսահմանության է ձգտում միավորների ընտրության հնարավորությունը³:

Նշանակումը միավորների ընտրության հնարավորությամբ՝ լեզվի ներքին ձևով ու նշակարգով⁴ թույլատրված ազատությամբ, նշանի հարաբերումն է արտաքին առարկային: Ամեն անգամ խոսելիս կատարում ենք լեզվական միավորների այս կամ այն ընտրությունը. ամեն անգամ ընտրելիս կատարում ենք այս կամ այն նշանակումը. ամեն անգամ նշանակում կատարելիս վերահաստատում ենք լեզուն. ամեն անգամ վերահաստատելիս վերստեղծում ենք լեզուն⁵:

2. Տրամաբանության և լեզվաբանության, համամարդկային լեզվի և ազգային լեզվի հարաբերակցությունը

3 Հմմտ. Աբրահամյան Ա. Ս., Տեքստային տարածության հորիզոնները, «Վէմ» համահայկական հանդես, 2016, N 3, էջ 119-128:

4 «Նշակարգ» տերմինը «կող»-ի հայերեն համարժեքն է, որ ստեղծել է Ա. Ս. Աբրահամյանը: Տե՛ս Աբրահամյան Ա. Ս., Տեքստի տարբերակները և Ուսելի պարադոքսը, «Վէմ» համահայկական հանդես, 2016, N 4, էջ 125:

5 Հմմտ. Гумбольдт В. фон, Избранные труды по языкознанию, М., «Прогресс», 1984, էջ 74-84:

Նշանայնության հիմքում, ինչպես նշեցինք, ազդանշանն է՝ որպես նշանասերման աղբյուր: Նշանասերումը լեզվասերում է և խոսքասերում. իրադրությունն է մղում բանաստության⁶: Լեզուն սկսվում է իրադրային մղումով և խոսքով պահպանվում է այնքան, որքան ժամանակ որ պետք է կամարտահայտմանը, ապա շարունակում է ինքնապահպանումը խոսքային հուշով: Արտահայտության ողջ ընթացքում սկզբից մինչև խոսքի սպառումը, անկախ մյուս նշանների փոխնիփոխ առկայանալուց, շարունակվում է ազդանշանային թրթռուն գործունեությունը և սպառվում խոսքը սպառվելուն պես: Խոսքի սպառմամբ սպառվում է հերթական նշանասերումը՝ չսպառելով, սակայն, լեզուն, որովհետև տվյալ բանաստության համար լեզվասերումն իրականում վերասերում է՝ ի տարբերություն խոսքասերման, որն ունի ժամանակային սկիզբ և ավարտ: Լեզվասերմանը միայն անավարտ սկիզբն է հատուկ (ավարտուն լեզվասերում չկա, որովհետև մեղյալ լեզուն սերմանազուրկ է), և այդ սկիզբը միշտ կրկնվում է յուրաքանչյուր խոսքի սկզբնավորման ազդանշամամբ: Ազդանշանն էլ, հասկանալիորեն, խոսքն սկսելուց անմիջապես առաջ առնվազն ներքին խոսքով է գործունացվում՝ մինչև խոսքավարտը բոլորագծելով լեզվական համակարգից առած և իրենով բեկվող նշանների մի տիրույթ, որն անվանում ենք **ազդողորտ** կամ, ըստ է. Ավետյանի, **ազդանշանային դաշտ**⁷: Ազդանշանը ներհյուսված է բոլոր նշաններին անխտիր, որովհետև պիտի լինի մի բան, որից սկսվի նշանը, և այդ բանը **ազդանշանային կետն** է⁸ կամ **ազդակետը**՝ ամեն մի նշանի սկզբնակետը:

Ազդողորտն իր հերթին կանխազդելի է լեզվական համակարգով, մեծ չափով նրանում տեղակայված, բայց նրանով չսահմանափակվող **հասկացական դաշտով**, որի ծիրում ազդանշանն ինքն էլ ոչ գործուն վիճակում ննջած է որպես մշտալար հնարավորություն:

Լեզվական նշանների բևեռներին ամրակցված անվանումները՝ «նշանակյալ» և «նշանակիչ», անտեսելու և շրջանցելու հնարավորություն են տալիս հասկացությունների նշանայնությունը՝ նշանակյալի բևեռում ամրագրելով իմաստի և նշանակության ասես ինքնակայությունը, թեև սրանցից գոնե առաջինի գոյությունը հասկացական հիմքով է պատճառաբանված: Բևեռների ընդունված անվանումները, ըստ էության, «սազական» են արդեն դրսևորված, իմա՝ խոսքային փուլը հաղթահարած նշաններին, իսկ սա անորոշության և անըմբռնելիության է հանգեցնում իրականությունը⁹: Հայերենի բառակազմությունը հնարավորություն տալիս է համա-

6 «Բանաստություն» ոչ թե «բանահյուսություն», այլ բառի ստուգաբանական իմաստով՝ «բան ասելը»:
7 Տե՛ս և հմմտ. **Аветян Э. Г.**, Семантика и лингвистика, Ер., Изд. Ереванского университета, 1989, էջ 64-72:

8 Տե՛ս անդ:

9 Այս անորոշությունը վերացած է է. Աթայանի նշանագիտական տերմինահամակարգում, որովհետև այնտեղ լեզվական բովանդակության ու արտահայտության բևեռները «նշանակվող» ու «նշանակող» են կոչվում, իսկ լեզ-

պատասխան տարբերակման՝ նշանի բովանդակային բևեռը ոչ թե «նշանակյալ», այլ «նշանակելի» անվանելով¹⁰: Ահա այս «նշանակելի» տերմինը առանձին լեզուների վերաբերմամբ կգործածենք լեզվական համակարգի, իսկ «նշանակյալ» անվանումը՝ խոսքային գծակարգի համար, որ կոյուրացնի հասկացության նշանային բնույթի մեկնությունը:

Ինչպես **մարդկային լեզու** ասվածն է իրացված առանձին լեզուներով, այդպես էլ հասկացությունները, հակառակ իրենց «վերլեզվական» կամ համայնալեզվական բնույթի, գոյություն ունեն միայն իրական լեզուների մեջ: Լեզվից դուրս հասկացություն չկա, ինչպես որ չկա առհասարակ անլեզու տրամաբանություն: Հասկացությունը նրանով է տրամաբանական, որ համընդհանուր և ըմբռնելի է բոլոր լեզուներով: Տրամաբանական հասկացությունները, սակայն, լեզվից լեզու տարբեր արտահայտություններ են ունենում, որոնք արդյունք են տարբեր լեզվակիր հանրություններին հատուկ հավաքական մտածողության՝ պայմանավորված թե՛ ներքին, թե՛ արտաքին գործոններով, մինչև իսկ հավաքական դատունակության մակարդակով: Արտաքին գործոնը տվյալ լեզվակիր հանրությանը շրջապատող իրականությունն է, ներքինը՝ այդ իրականությունը նրա՝ սեփական լեզվով վերարտադրելու եղանակը, կերպը, հմտությունը՝ թելադրված այդ իսկ լեզվի անհատական, ներքին և դինամիկ ձևերով¹¹, ինչպես նաև նույն լեզվի նշակարգով: Եվ քանի որ բոլոր լեզուներին է հատուկ մարդկային լեզվի համընդհանուր ձևը, վերջինով էլ հնարավոր է դառնում հասկացության համայնալեզվականությունը: Արդ, տարբեր լինելով արտահայտությամբ, հասկացությունները ներքին կողմով նույնական են բոլոր լեզուներում: Նշանակում է՝ հասկացությունը նշան է, որի նշանակյալը համամարդկային լեզվի «զետեղարանում» է, նշանակիչը՝ տարբեր լեզուներում: Սա էլ նշանակում է, որ լեզուների համընդհանուր ձևը նշանակյալի ձևն է՝ բովանդակության ձևը, ուստի և համամարդկային լեզվի ներքին ձևը: Նույնանում են ոչ թե առհասարակ ներքին և համընդհանուր ձևերը, այլ մարդկային լեզվի համընդհանուրն ու ներքինը, որովհետև եթե առանձին լեզուները սեփական բովանդակությանը համապատասխանող սահմանափակ թվով արտահայտություններ են ունենում, ապա համամարդկային լեզվի բովանդակությանը՝ նշանակյալին համապատասխանող արտահայտությունները կամ նշանակիչները հազարավորներն են. «-Լեզվի մեջ այնպես հրաշալիորեն է միահյուսված անհատականը համընդհանու-

վական ու խոսքային բովանդակության բևեռները՝ «նշանակվող» ու «նշվող», լեզվական ու խոսքային արտահայտության բևեռները՝ «նշանակող» ու «նշող»: Տես **Աթայան Է. Ռ.**, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1981, էջ 240:

10 Պ. Ջահուկյանը, ի տարբերություն նշանների խնդիրներին անդրադարձած մյուս հեղինակների, նշանի բովանդակային բևեռը հենց «նշանակելի» է անվանում: Տես **Ջահուկյան Պ. Ք.**, Հայոց լեզվի գարգացումը և կառուցվածքը, Եր., «Միտք» հրատ., 1969, էջ 97:

11 Տես Гумбольдт В. фон, նշվ. աշխատ., էջ 69-74, 100-107:

րին, որ հավասարապես ճիշտ է ասելը, թե ողջ մարդկային սեռը խոսում է մեկ լեզվով, իսկ յուրաքանչյուր մարդ ունի իր լեզուն»¹²:

Դառնալով առանձին լեզուներին՝ վերհիշենք այն հանրահայտ փաստը, որ հասկացությունները կարող են արտահայտվել բառով կամ շարույթով: Մեկ հասկացություն է «վարդ»-ը, մեկ հասկացություն է «կարմիր վարդ»-ը, մեկ հասկացություն է «մուգ կարմիր վարդ»-ը: Ավելին՝ հենց միևնույն հասկացությունն էլ հնարավոր է արտահայտել և՛ բառով, և՛ շարույթով՝ «ուտելիք» = «ուտելու բան»: Սակայն հասկացություններ են նաև ձևույթները, այն էլ՝ ոչ միայն արմատական, այլև ածանցական ու բառահարաբերական, և եթե տրամաբանները սովորաբար ուշադրություն չեն դարձնում այս իրողության վրա, ապա պատճառը բնավ էլ այն չէ, թե վրիպում են: Տրամաբանության գիտակարգի նպատակը չէ հասկացությունների վերհանումը հատկապես լեզվական այս կամ այն միավորի արտահայտվածությամբ, թեև հարկ եղած դեպքում շեշտում է այդ միավորների կարևորությունը և համեմատում տրամաբանական ու լեզվաբանական հասկացությունները (ասենք՝ դատողությունն ու նախադասությունը): Բայց նույնիսկ այս դեպքում բաղդատումը երբեք մեկ լեզվի նշանակչի վրա բևեռվել չի նշանակում համաձայն տրամաբանության համընդհանուր բնույթի: Սա էլ հենց տրամաբանության և լեզվաբանության էական տարբերությունն է: Տրամաբանության ուշադրության կենտրոնում ընդհանուրի, առանձնահատուկի և մասնավորի հակադրամիասնությամբ համընդհանուր բովանդակությունն է՝ համընդհանուր ձևերի խմբավորմամբ ու տարբերակմամբ: Ընդհանուր լեզվաբանության ուշադրությունը մարդկային լեզվում իմաստների արտահայտման հնարավոր նշանակիչների բազմության խմբավորմանը, հանրույթներին, տարբերույթներին և դրանց իմաստավորման բնույթին է ուղղված: Թվում է՝ այս տարբերության պարապը ցնոող առաքելություն պիտի ունենար սերող իմաստաբանությունը, սակայն ստիպված ենք արձանագրել, որ տրամաբանությունից ելած այս գիտակարգն այդպես էլ լեզվաբանության չհասավ, ի զորու չեղավ դառնալու «լեզվատրամաբանական» միջգիտակարգ և շարունակում է իր առկախությունը մինչ օրս:

3. Հասկացություն և պատկերացում, նշանակելի և նշանակյալ, նշանակություն և իմաստ

Դառնանք, սակայն, ձևույթների հասկացականության խնդրին: Հայերենի «-ու-հի», պարսկերենի «-դուխտ», ռուսերենի «-ya» ձևույթներն այլ բան չեն, եթե ոչ իգական սեռի հասկացության արտահայտիչներ: Նույն հասկացությունն են «բանաստեղծուհի»-ն և «կին բանաստեղծ»-ը: Տարբեր է սրանց լեզվական տարազը: Իգա-

¹² Անդ, էջ 74:

կանության հասկացությունը մի դեպքում «կին» բառով է նշված, մի դեպքում վերջածանցով: Հասկացություններ են նաև քերականական կարգերն ու դրանց քերույթները (հմմտ. թվի հասկացությունը, եզակի, երկակի, եռակի, հոգնակի թվերի հասկացությունները և այլն): Մեր նպատակը ևս, սակայն, այս պահին ոչ թե տրամաբանական հասկացությունների հնարավոր լեզվական արտահայտիչների վերհանումն է, այլ այդ իսկ հասկացությունների նշանային բնույթի պարզաբանումը: Եթե, ըստ մարդկային լեզվի ընդգրկման, հասկացության իբրև նշանի բովանդակային տիրույթը նշանակյալ է բազմալեզու նշանակիչներով, ապա առանձնալեզվական կամ ներլեզվական ընդգրկմամբ՝ հասկացություն-նշանի բովանդակությունը ոչ թե նշանակյալն է, այլ **նշանակելին** (հնարավոր նշանակյալը). բուն նշանակյալը նշանակելիի առարկայական վերաբերությունն է խոսքային բովանդակությունը կամ բովանդակավորված խոսքը, իսկ նշանակիչը համապատասխան հնչյունակազմն է՝ հնչական համապատասխան ելևէջավորմամբ: Ինչ խոսք, ստույգ է, որ հասկացությունը համամարդկային է, բայց դրա իրացումը միշտ նշույթավորված է լեզվականորեն՝ առանձնալեզվական թաղանթով: Ավելին՝ հասկացությունից անբաժան է պատկերացումը, որի օգնությամբ և որին սերտաճելով՝ հասկացությունը մասնավորվում է խոսքում՝ որպես առարկայական իմաստ, և մտապահվում լեզվական համակարգի իմաստային դաշտում՝ անցնելով համամարդկային լեզվի հասկացական դաշտ: Հասկացությամբ տոգորված լեզվական ատաղձը՝ անվանողական գործառույթով, պատկերակցական օղակով է անցում կատարում դեպի առարկայնացվող, հատկանշայնացվող, ընթացանշայնացվող առարկայական վերաբերություն: Պատկերացումն ազդ է այն բանի, որ հաղորդակցվելիս ենթագիտակցական մակարդակից գիտակցականին են անցել հասկացությունները: Հասկացությունների զարթուցիչը (և դրանց համակցության ուղեկիցը) շարակարգային տիրույթի ազդանշանն է, որի տևողությունը լեզվական գործունեությունից կամ, որ նույնն է, լեզվական համակարգի գործունեացումից մինչև իմաստայից հնչաշղթայի վերջնականակի ազդարարումն է: Այդ վերջնազդարարումն իր հերթին մանրազդանշան է տվյալ խոսքային գործունեության ավարտի, որով վերստին ամփոփվում է գծակարգված հաղորդանյութով իմաստավորված հասկացությունների տվյալ համակցությունը լեզվի տրամաբանական համակարգում: Շնորհիվ պատկերացման՝ հասկացությունը մասնավորվում է խոսքում մինչև որոշակի առարկա, հատկանիշ կամ գործողություն-եղելություն, շնորհիվ հասկացության ընդհանրացնող ուժի՝ պատկերացումն ընդլայնվում է մինչև անսահմանափակ զուգորդումների ցանցկեն հնարավորություն: Եթե մինչև իմաստավորումը հասկացությունն ու պատկերացումն անբաժան ուղեկիցներ են, ապա իմաստավորվելիս ու վերիմաստավորվելիս սրանք սերտաճում են՝ «շոշափելիորեն» նշանակելով տվյալ առարկան (հատկանիշը, գոր-

ծողությունը և այլն): Նշանակելի հասկացության և պատկերացման՝ նշանակությանը ներանցվածությունն է իմաստը, որ ամեն անգամ նորոգվում է խոսքում և նորոգված վերադառնում լեզվական համակարգ: Նորոգումը, չմոռանանք, նաև փոփոխություն է ենթադրում. նորոգումը՝ նորովի գործածությունը, իմաստափոխության հիմքն է: «Քար»-ը և «սիրտ»-ը, թվում է, անհամատեղելի և անբաղդատելի հասկացություններ են, բայց արի ու տես՝ կարող են համակցվել և **իմաստավորվել անգույթ** լինելու **նշանակությամբ** կամ **նշանակվել անգթության իմաստով**. «քարասիրտ» կամ «քար սիրտ» **նշանակում է** «անգույթ»: Այս ներքին նշանակմամբ, փաստորեն, իմաստը հասկացության նշանակման առարկան է: Նշանակությունը, արտալեզվական իրականությունից թափանցելով լեզվական ոլորտ, պատկերացմամբ վերաբովանդակավորվում և ազդանշում է իմաստի մոտալուտ կազմավորումը. իմաստը կազմավորվում է հասկացության և նշանակություն տվող՝ նշանակող պատկերացման սերտաճմամբ՝ հասկացական նոր տարածք նվաճելով լեզվական համակարգում իբրև արտալեզվական իրականության նորացված նմանակ: Իմաստն այսպիսով անբաժան է նշանակությունից. առանց վերջինի չկա առաջինի գոյություն. իմաստակազմիչը երկրորդն է: Եվ այդ կազմավորման գործառույթն էլ նշանակությանը հնարավորություն է տալիս նաև ինքնակայության՝ **անիմաստ նշանակության**, մինչդեռ բացառված է «աննշանակություն իմաստը»:

Չնշանակված իմաստ չկա:

Չնշանակված իմաստ չկա, որովհետև իմաստը նշանի մի ենթաբաղադրիչն է, իսկ առանց նշանակության, նշանակությունից զուրկ նշան չիք: **Նշանակությունը նշանի գոյության նշանն է**, բնական նշանը՝ ի տարբերություն իմաստի, որ պայմանական է և կարող է չլինել բովանդակային նշանակազմում¹³ ու նշանոլորտում առհասարակ: Նշանոլորտը (գեր)նշան է՝ իր արտաքին ու ներքին միջավայրով. **նշանակազմը** ներնշանային տիրույթն է՝ նշանոլորտի ենթոլորտը, և քանի որ այս նշանակազմը բովանդակային տիրույթին է վերաբերում, ապա, որպես ենթոլորտ, իր իսկ սահմաններով հենց նշանակյալն է: Նշանակության բնական և իմաստի պայմանական նշան լինելն էլ, ահա, ներնշանային տիրույթի՝ նշանակազմի՝ նշանակյալի՝ կտրվածքով ենք առնում, ո՛չ բնավ՝ նշանոլորտի: Նշանակյալը լիարժեք է իմաստով, որովհետև վերջինս անբաժան է նշանակությունից: Իմաստից զուրկ նշանակյալը կաղ է, որովհետև անիմաստ նշանակություն է սուս: Իմաստակիր նշանակյալի (բնականաբար, նաև նշանի) մեջ իմաստը նշանակալից է, նշանակությունը՝ իմաստալից: Այսպիսով՝ նշանոլորտի հարաբերությամբ **ներքին նշաններ** են նշանակությունն ու իմաստը: Նշանոլորտն ու նշանակազմը և համապա-

13 «Նշանակազմը» երկու իմաստով ենք մեկնաբանում: Մի իմաստով ընդգրկում է նշանային բաղադրությունն ամբողջությամբ, որը դարձյալ նշանոլորտի տիրույթում է, նրա մի ենթոլորտն է: Այստեղ խոսվում է միայն բովանդակային նշանակազմի մասին՝ նշանակության և իմաստի միասին առնված:

տասխանաբար ներքին (նշանակազմի) ու արտաքին (նշանուղորտի) նշանները, որ հարաբերվում են **նշանակցմամբ**, ոչ միայն ներառական, այլև միջնշանային՝ **շարայնական** (սինտակտիկական) հարաբերության մեջ են: Այս հարաբերությունը նույնական է դատողության և սրա լեզվական հարաբերակից ասույթի ստորոգական հարաբերությանը: Սուբյեկտ-ենթակայի հիմնային նմանակը նշանակությունն է, պրեդիկատ-գերակայի հիմնային նմանակը՝ իմաստը, որովհետև ինչպես գերական է ներառում սուբյեկտը, այնպես էլ իմաստի մեջ է նրանից անբաժան նշանակությունը, իսկ երկուսը միասին կանխադրված են հանգույց-ստորոգչի նմանակ նշանակցման մեջ և այդ ներգործությամբ են վերամիավորվում:

Դժվար չէ նկատելը, որ աստ ներկայացվածի հակոտնյան է Գ. Ֆրեգեի տեսությունը, ըստ որի՝ նշանակությունը կարող է իմաստ ունենալ, իսկ իմաստը կարող է և չունենալ նշանակություն¹⁴: Բանն այն է, որ Գ. Ֆրեգեի հայեցակարգում նշանակության ելակետն է այլ: Նրա համար նշանակությունը հենց նշանակման առարկան է¹⁵: Մինչդեռ մեր համակարգի ելակետային հարաչափերը մեկ այլ տիրույթում են, որոնք միանգամայն այլ բան են հուշում: «Նշանակություն» և «իմաստ» հասկացությունների ընդհանրական հանգույցը «ունեմ» բայն է, ասել է՝ ընդհանրական հատկանիշը ներգործականությունն է՝ **ունեմ** ազդանշանով. հմմտ. «Այսինչ բանը նշանակություն (չ)ունի» և «Այսինչ բանն իմաստ (չ)ունի»: Սրանց տարբերակիչ հատկանիշը իմաստի դիտանկյունից կրավորականությունն է՝ հաստված **արտահայտվածության** ազդանշանով, նշանակության դիտանկյունից՝ ներգործականությունը՝ հաստված **կազմավորման** ազդանշանով: Նշանակության նշանային բնութագրիչը կրկնակի ներգործականությունն է՝ ունեցության և կազմավորման միադաս թևերով, իմաստի նշանային բնութագրիչը՝ ներգործականություն-կրավորականությունը՝ ունեցության և արտահայտվածության տարադաս թևերով:

Իմաստն արտահայտվում է:

Իմաստն արտահայտվում է, նշանակությունը՝ ո՛չ:

Իմաստը և նշանակությունը, որոնք անհամաչափ են իրացվում, ոչ միայն առանձնաբար են ներգործունակ, այլև **փոխունեցության** հարաբերությամբ: Անհամաչափ իրացվածության հարաչափը պարտադրայնությունն է. նշանակությամբ իմաստը պարտադրային է, իմաստով նշանակությունը՝ ոչ պարտադրային: Նշանակազմում նշանակությունը նշանի արժույթն է. նշանը մշտարժույթ է՝ նշանակության բաղադրիչով, և դրանով է վերջինս նշանի նշան. առանց «նշանակություն» նշանի չկա նշանուղորտի նշան, որը նշանակության հարաբերությամբ հիմնանշան է: Իմաստը նշանի հնարավոր արժույթն է ներնշանային, տվյալ դեպքում

14 Տե՛ս Փրեգե Դ., Логика и логическая семантика: Сборник трудов. Учебное пособие для студентов вузов, М., «Аспект Пресс», 2000, էջ 231:

15 Մանրամասն տե՛ս անդ, էջ 230-246:

Նշանակության «ցատկատախտակով» դեպի արտալեզվական իրականություն ուղղորդվելիք նշան, որի հարաբերությամբ նույնպես նշանալորտի նշանը հիմնա- նշան է: Իմաստի արտահայտվածությամբ այդ իսկ իմաստը հնարավորից փո- խարկված է լինում դրսևորված արժույթի՝ արդեն ոչ թե ուղղորդվելիք, այլ ուղ- ղորդված դեպի նույն իրականություն: Նշանակազմում «նշանակություն» և «ի- մաստ» նշանները, այսպիսով, միտումնային տարբերություն ունեն. նշանակու- յունը՝ ներնշանամետ-ներկենտրոն, իմաստը՝ արտանշանամետ-արտակենտրոն նշան է: Մյուս կողմից իմաստի առկայությունն ինքնին արդյունք է արժույթակրու- յան, ազդանշան է այն բանի, որ նշանակազմում կա՝ նշանակություն: Նշանա- կությունը, լինելով նշանի մշտարժույթը, մշտարժույթն է դառնում նաև իմաստի ա- մեն անգամ, երբ նրա կազմավորման անհրաժեշտություն է լինում: Իմաստավոր- ված նշանակության դեպքում իմաստն ու նշանակությունը փոխարժույթային հա- րաբերության մեջ են և այդ դեպքում արդեն հավասարաչափ պարտադիր:

**Իմաստը նշանակություն ունի. նշանակությունը կարող է իմաստ ունենալ:
Իմաստն արտահայտվում է. նշանակությունը կարող է կազմավորել իմաստ:**

Սակայն մինչև իսկ այս անհամաչափ իրացվածությունը կամ իրացվելիության անհամաչափությունը համակշռվում է համաչափության սկզբունքով, այն էլ, ինչ- պես կասեր Ա. Ս. Աբրահամյանը, կրկնակի ներդաշնակմամբ¹⁶, որոնցից մեկը, ինչպես ասվեց, ընդհանրությամբ, մյուսը տարբերությամբ է պայմանավորված: Ընդհանրությունը դրանց՝ միմյանց ունենալու փոխադարձությունն է, տարբերու- յունը՝ փոխադարձության չափը՝ պայմանավորված գործունության աստիճանով: Ընդհանրության ու տարբերության կայունարարը սրանց միջբևեռային անդադ- րում ոգորումն է: Իմաստն իր **արտահայտվելու** կրավորականությունը էգ սարդի նման միավորում է նշանակություն **ունենալու** ներգործականությանը՝ սրա ուժից լիցքավորված, պատրաստ՝ կախման մեջ պահելով խժռելու նրան՝ «արուին»՝ ներ- գործականությունը, իսկ նշանակությունը, առանց որի գոյություն ունենալ չի կա- րող իմաստը, ջանում է ձերբազատվել վերջինիս ծվատող ճիրաններից՝ ինքն ի- րեն հասցնելով անկախության՝ ինքնակայության: Նշանասերման ողջ տևողու- յունը նշանակալի այս երկու բաղադրիչների փոխձգողության և փոխադարձ պայ- քարի բովով է ընթանում: Պայքարն ավելի կատաղի է դառնում նշանակչի թելա- դրած կաղապարով, որին «չենթարկվելու» հնարավորությունն էլ հաճախ հանգեց- նում է նշանակության գործառական տեղաշարժերի, սրանք էլ՝ իմաստափոխու- յան: Նշանակության ինքնակայությունը, սակայն, երբեք լիակատար անկախու- յուն չի ապահովում նրա համար, որովհետև այդ նշանակության «կիրքը» ձգողա-

16 Տե՛ս **Աբրահամյան Ա. Ս.**, Նշանակալի և նշանակչի կրկնակի ներդաշնակումը [եզվում, «Նշան, համակարգ, հա- ղորդակցում». հոդվածների ժողովածու. նվիրված եղվարդ Աթայանի հիշատակին, Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 20-26:

կանության ուժով, ո՞ր մի մակարդակում էլ լինի, դեպի իմաստ է ուղղորդվում, դեպի նոր իմաստասերում, դրանով էլ՝ նոր նշանասերում՝ ասես պահպանելու նշանների մեջ նրանց «սերնդատվության» անխափանությունը:

Հասկացական դաշտն ավելին է, քան հասկացությունների հարացուցային ամբողջությունը: Նրա սահմանը լեզվական հորինվածքի անեզրությունն է և ներառում է, հասկացություններից բացի, նաև այն բոլոր տարրերը, որոնք օժանդակում են թե՛ դրանց ձևավորմանը, թե՛ տարբեր հասկացությունների համակցությանը: Չկա որևէ լեզվական իրակություն, որ դուրս լինի հասկացական դաշտից՝ սկսած իմաստակազմից հնչական միավորներից մինչև գերիմաստավորված վերասություն:

Տարածված տեսակետի համաձայն՝ հասկացություն չեն անվանողական դերից զուրկ միավորները՝ հատկանունները, նմանաձայնությունները, հարաբերիչները, ոմանց կարծիքով՝ նաև վերաբերականներն ու ձայնարկությունները¹⁷: Եթե անգամ սա բացարձակ ճշմարտություն համարելու լինենք, դարձյալ պիտի ընդունենք, որ հասկացական դաշտից դուրս չեն այս բոլոր միավորները, ինչպես նաև հնչյունները, վանկերը: Սրանք բնավ ինքնանպատակ չեն և ծառայում են լեզվի համակարգային տարրերի հասկացութենավորմանն ու խոսքային գծակարգում դրանց (վեր)իմաստավորմանը: Ասել է՝ թեև հասկացական բաղադրիչների ու բաղադրությունների բուն տիրույթը լեզվական համակարգն է, այդուհանդերձ հասկացական դաշտը ձգվում է համակարգից գծակարգ տանող բոլոր ոլորաններով՝ զուգակցված ազդրլորտի «շչակներով», նրա հետ միասին մշտապես արարման բովում կոփելով կենդանի լեզվի նշանները, նորանոր նշանակումներով բորբոք պահելով նշանասերման կերոնը:

4. Ներքին ձև և նշակարգ, դատողություն և նախադասություն, անշարժ սկզբնաշարժիչ և ստորոգում

Նշանասերումը կախման մեջ է ներքին ձևի ու նշակարգի համատեղ ուղղորդումից: Ներքին ձևը այն հունն է, որով ընթանում, առաջ է մղվում խոսքային գետը: Գետը հունի ներսում որոշակի գծային կարգաբերվածություն ունի, որ «հուշում» է նրան ինչպե՛ս հաղթահարել քարաբեկորները, խութերը, որտե՛ղ հանդարտ ընթացք պահպանել, զառիվայրում մոլեգնության հասնել, մոլեգնության ճանապարհին հարկ եղած դեպքում նոր հուն բացել. խոսքային հոսքի այս ընթացքին օրինաչափություն հաղորդող կարգաբերիչը լեզվական ակունքից թե-

17 Տե՛ս Աղայան Է. Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1984, էջ 26:

լադրված նշակարգն է, որ, մղելով «գետը» նոր հուն բացելուն, ներքին ձևը կազմափոխելուն, նոր համակարգի սկիզբ է դնում: Լեզուն, ահա, և՛ այդ համակարգն է, և՛ «հունն» է՝ ներքին ձևը, և՛ «գետի» հոսանքը՝ խոսքը, և՛ հոսանքի կարգավորիչը՝ նշակարգը միաժամանակ: Ներքին ձևի սնուցիչը ներքին իմաստն է, որ կապված է սրան ներքին նշանակությամբ: Ներքին ձևը՝ ներքին նշանակությամբ, հարաբերիչն է ներքին և արտաքին իմաստների¹⁸: Արտաքին իմաստը լեզվական բովանդակության՝ նշանակելիի մի մասն է, արտաքին իմաստի արտահայտությունը՝ լեզվական արտահայտելին՝ հնարավոր նշանակիչը: Խոսքային բովանդակությունը լեզվական բովանդակությունից պատկերացման միջնորդությամբ խոսքին փոխանցված իմաստավորյալ հասկացությունն է՝ նշանակյալ դարձած նշանակելին, նշանակյալի արտահայտությունն էլ ձևավորված խոսքն է: Եվ այս ամենը լեզուն է՝ անզուգական արտադրանքը մարդկային հավաքական ստեղծագործ մտքի:

Սակայն լեզուն հասկացությունների սոսկական շարան չէ: Հաղորդակցման համար դրանք պետք է կյանք առնեն, շնչավորվեն, ասել է՝ ստորոգմամբ հարաբերվեն: Հասկացությունները ստորոգական հարաբերությամբ նոր կերպավորում են ստանում, դառնում են դատողություն: Դատողության և հասկացության նշանակյալը նույնն է. տարբեր են նշանակիչները: Դատողությունն էացնում է հասկացությունը՝ տրոհելով նրա ամբողջությունը առարկայական ու հատկանշային բևեռների, և հանգույցի օժանդակությամբ վերահաստում այդ երկուսի միասնականությունը: Դատողությունը միասնական նշանի երկփեղկմամբ գոյացած սուբյեկտ-պրեդիկատի վերամիավորված հասկացություն է, հասկացությունը՝ նշանի երկփեղկման ու վերամիավորման ենթակա դատողություն:

Դատողությունը շնչավորված հասկացություն է, հասկացությունը՝ շնչակտուր, բայց և շնչարկելի դատողություն:

Դատողության բաղադրակազմը քննելիս վրիպում է հանճարեղ գերմանացին՝ արիստոտելյան անշարժ սկզբնաշարժի¹⁹ դեր վերագրելով սուբյեկտին²⁰: Դատողության և քերականական նախադասության բաղադրիչների ստորոգական հարաբերության մեջ կա, անկասկած, նման բան, միայն թե՛ որպես վերից պահպանված հուշ, և «հուշարարը» ո՛չ սուբյեկտ-ենթական է, ո՛չ պրեդիկատ-ստորոգյալը, որոնք օժտված չեն բնավ անշարժության կամ սկզբնականության հատկությամբ: Դատողության և նախադասության կազմում անշարժ սկզբնաշարժի թույլ նշմարվող հետքը կա շարժիչ հանգույցի՝ ստորոգչի՝ վրա: Անշարժ սկզբնաշարժիչը լեզ-

18 Հմնտ. **Աթայան Է. Ռ.**, Նշանային կազմավորումների բովանդակային և արտահայտական շերտերի հարաբերակցության ճշտման փորձ, «Թեգիսներ: Նշանագիտություն և լեզուների դասավանդում», Եր., 1997, էջ 7-9:

19 Տե՛ս **Аристотель**, Сочинения в четырёх томах, том 1, М., «Мысль», 1976, էջ 302, 309-314:

20 «...Բանականությունը... **նպատակահարմար գործելն է**: ...Բնության որպես նպատակահարմար գործունեության Վրիստոտելի տված սահմանման համաձայն՝ նպատակն այն անմիջականը, **հանգրոյթ անշարժ** բանն է, որն ինքն է **շարժման մեջ դնում**. այսպիսով՝ այն **սուբյեկտ է**» (Гегель Г. В. Ф., Феноменология духа, М., «Наука», 2000, էջ 17):

վական համակարգում է, մի՛միայն նրա **վերնուղորտում**, որտեղից սկիզբ է առնում լեզվական շինվածքի նշանասերումը: Անշարժ սկզբնաշարժիչն այդ ոլորտի Է-ն է (Est) առարկայահատկանշային տրոհելի միասնականությունը, որը, **միջնուղորտում** պահպանելով ինքն իրեն, երկփեղկվում է ստորոգելիների՝ հնարավոր ստորոգյալների, իսկ **ներքնուղորտում** ստորոգելի-ստորոգյալ կազմիչների՝ դարձյալ ինքնապահպանմամբ: Ձուտ կառուցվածքաբանորեն ունենք երեք բաղադրիչ. գերադաս դիրքում ստորոգիչ, նույնաստորադաս դիրքում ստորոգելի (հնարավոր ստորոգյալ) և ստորոգյալ փոխատեղելի միավորներ: Թեև տրամաբանության մեջ ևս, սուբյեկտից ու պրեդիկատից բացի, խոսվում է նաև հանգույցի (copula) մասին, բայց և այնպես դատողության կազմում գլխավոր բաղադրիչի խնդիր չի դրվում: Լեզվաբանության համար էական խնդիր է դա (ինչ խոսք, տրամաբանական հիմք ենթադրող լուծմամբ): Լեզվաբանության մեջ տարածված տեսակետի համաձայն՝ նախադասությունը երկու գլխավոր անդամ ունի, որոնք են ենթական և ստորոգյալը, ընդ որում, ստորոգյալ ասելով՝ նկատի են ունենում կամ դիմավոր բայը, կամ էլ բայական հանգույցով նյութական որևէ խոսքի մաս: Մի տրամաբանական խախտումն այն է, որ (ինչպես կտեսնենք) ստորոգյալն իրականում միայն վերագրվող հատկանիշն է կամ առարկան, մյուս խախտումն էլ՝ այն, որ «ենթակա» կոչվող անդամը գլխավոր է համարվում: Ասվածը ցույց տանք Հեգելի դիտարկած օրինակով (*այս վարդը կարմիր է*²¹): Այսօր տարածված տեսակետով *վարդը* ենթական է, *կարմիր է-ն*՝ ստորոգյալը, մինչդեռ Մանուկ Աբեղյանը ստորոգյալ համարում էր միայն «կարմիր» բաղադրիչը, իսկ հանգույցի հետ՝ «կարմիր է», այն անվանում էր բայ-ստորոգյալ: Ենթական, ահա, բայ-ստորոգյալի՝ ենթական է՝ նրա լրացումը, և ենթակա է ստորոգյալ դառնալու: Վերն ասացինք, որ լեզվական համակարգի միջնուղորտում տեղի է ունենում միասնական Է-ի երկփեղկում՝ հնարավոր ստորոգյալներով: Ըստ բերված օրինակի՝ հնարավոր ստորոգյալներն են «վարդը» և «կարմիր»-ը: Թե այդ ստորոգելիներից որն է իրականում ստորոգյալ դառնում, որոշողը խոսողն է, որի ներքին խոսքում այն արդեն որոշարկված է: Եթե ներքին խոսքում «կարմիր»-ն է ստորոգյալը, արտաքին խոսքն այդպես էլ ձևավորվում է՝ **պահպանելով առաջինի ստորոգելիությունը՝ վարդը կարմիր է**: Ստորոգյալը «կարմիր»-ն է, որովհետև ստորոգվող ենթակային որպես հատկանիշ վերագրվող բառը դա է: «Վարդը» շարունակում է ստորոգելի մնալ, որովհետև փոխատեղելի է ստորոգյալի հետ: Եթե ներքին խոսքում ստորոգյալը լիներ «վարդը», ստորոգելին «կարմիր»-ն էր լինելու՝ *կարմիրը վարդն է*: Նշանակում է՝ իրոք ստորոգական բաղադրությունը զուտ կառուցվածքաբանորեն եռանդամ է՝ ստորոգելի-ստորոգյալ-ստորոգիչ միավորներով, որոնցից վերջինը գերադասն է:

21 См'и Гегель Г. В. Ф., Энциклопедия философских наук, том 1, Наука логики, М., «Мысль», 1974, էջ 356-357:

Այս կառուցվածքային եռանդամությունը, սակայն, մեր գիտակցության մեջ բեկվում է տրամաբանական երկանդամության, որի մի բաղադրիչն է ստորոգելին, մյուսը՝ ստորոգյալն ու ստորոգիչը՝ միասին առնված: Քանի որ կառուցվածքաբանորեն գերադասը ստորոգիչն է, ապա հասկանալիորեն երկանդամներից գերադասը նա կլինի, որի կազմում է՝ ստորոգիչը, այսինքն՝ այն, ինչն Աբեղյանն անվանում է բայ-ստորոգյալ: Եթե ստորոգելին ենթական է, ապա տրամաբանորեն ստորոգյալ-ստորոգիչ միացությունը դրա գերական է: **Նախադասությունը մեկ գլխավոր անդամ ունի՝ գերակա** (= բայ-ստորոգյալ)²²: Ահա խոսքում և տրամաբանական դատողության կազմում անշարժության դրոշմը որոշ չափով պահպանված է ստորոգչի վրա, միայն թե այստեղ անշարժությունը ոչ թե քարացածության, այլ աներերության, անհողողության, իր վերին դիրքում կայուն մնալու հաստատականության իմաստով պիտի հասկանալ: Այս անշարժությունն է համակարգային վերնուլորտի սկզբնաշարժչից փոխանցվել գծակարգին, որտեղ վերահաստատվում է նրա վերնային գոյությունը դիրքային աներերությամբ: Աներեր է թե՛ փեղեկելի ստորոգելիներն իրենում ներունակորեն ամփոփած վերնուլորտի **Է-ն**՝ անշարժությամբ իսկ շարժաբեր սկզբնականությամբ, թե՛ վերնուլորտի հուշն իրենում մշտավառ պահող և «հուշատիրոջ» գոյությունն ամեն անգամ դրսևորվելիս վերահաստող գծակարգի ստորոգիչը: Ստորոգիչն ազդանշանն է գծակարգային **աներեր վերջնահաստիչի** փոխարկված համակարգային վերնուլորտի անշարժ սկզբնաշարժչի հարակայության: Թվում է «ստորոգում» բառի կազմությունը ևս՝ իր ներքին ձևով, հաստատում է մեր այս մեկնաբանությունը. ստորոգել, ասել է թե՛ վար բերել ասելիքը (վերնուլորտից մինչև ներքնուլորտ, մինչև խոսքի առարկայական արտասանություն): Ի դեպ, ստորոգման տարածված լեզվաբանական սահմանումը ևս սրբագրման կարիք ունի: Այն սոսկական հատկանիշի վերագրումը չէ ենթակային, ինչպես ընդունված է համարել, որովհետև «է»-ով հաստում-հաստատումը հավասարեցում է ենթադրում. «է»-ն հենց հավասարության նշանն է, մինչդեռ հավասարության նշան չի կարող դրվել առարկայի և հատկանիշի միջև: Սրա ապացուցման անզուգական հնարավորություն տվող լեզու է հայերենը: Ստորոգյալը (աբեղյանական ըմբռնմամբ) առարկայական հարց է պահանջում *վարդը (ի՞նչ է =) կարմիր է*: Անգամ հատկանիշ հուշող հարցը փոխանվանական՝ առարկայական բնույթ ունի՝ *վարդը (ինչպիսի՞ն է =) կարմիր է*: Նշանակում է՝ ստորոգումը ոչ թե հատկանիշի, այլ առարկայացված հատկանիշի վերագրումն է ենթակային: Մյուս կողմից՝ փոխատեղության դեպքում փոքր-ինչ այլ պատկեր ենք ունենում: Եթե ասում ենք *կարմիրը վարդն է*, ապա ունենում ենք ոչ միայն բառային, այլև ա-

22 Մանրամասն տե՛ս տողերիս հեղինակի «Քերականական կարգերի համատեղումը ստորոգման մեջ» հոդվածը, Հայերենագիտական միջազգային տասներորդ գիտաժողով, 7-9 հոկտեմբերի, 2015 թ., «Զեկուցումների ժողովածու», Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, էջ 49-57:

նարկայահատկանշային փոխատեղություն. ոչ միայն «կարմիր» հատկանիշն է առարկայացվում, այլև «վարդ» առարկան է հատկանշացվում վերագրվելով *կարմիր* «առարկային» որպես «վարդ լինելու» հատկանիշ: Այսպիսով՝ ստորոգումը առարկայացված հատկանիշի կամ հատկանշացված առարկայի վերագրումն է ենթակային առարկայնաբար²³:

Ստորոգումը լեզվի ոգին է, նրա շնչառությունը: Չկա լեզվական միավորների որևէ միացություն կամ հարաբերություն, որի հիմքում չլինի ստորոգում²⁴ (հմմտ. *տնակ* ⇒ *փոքր տուն* ⇒ *տունը փոքր է*): Լեզվական բոլոր իրակությունները, ներառյալ խորքային ստորոգումները, ծառայում են հաղորդման էացմանը՝ մակերեսային ստորոգմանը: Հասկացական դաշտը ծայր է առնում վերնոլորտային էության տրոհման ազդանշումից՝ ստորոգական սկզբնազդից, և եզրափակվում աստիճանի ավարտի ազդանշմամբ՝ խոսքային ստորոգման վերջնազդով: Խոսքում վերջնազդը կարող է համատեղել ստորոգիչը և վերջնավանկը, եթե ստորոգիչը հենց նախադասության վերջին միավորն է: Այդպես չլինելու դեպքում նախադասությունը կրկնակ վերջնազդ է ունենում կառուցվածքային, որի արտահայտիչը գերական է, և հնչերանգային, որի արտահայտիչը տվյալ նախադասության վերջին վանկի շեշտն է՝ անկախ նրա բնույթից: Հնարավոր է նաև եռակի վերջնազդ, այսինքն՝ եզրափակիչ նախադասության՝ նաև՝ առկայացական տրոհմամբ հագեցվածություն:

5. Ստորոգումը՝ լեզվական և արտալեզվական աշխարհների սփոտայական ազուցիչ (եզրակացություն)

Նշանասերման ողջ ընթացքը հասկացական դաշտի և ազդոլորտի ներանցված տիրույթներում փոխնիփոխ խլրտացող նշանային տարրերի ստորոգական ներդաշն շղթայակցում է: Ստորոգական սկիզբը համակարգային վերնոլորտում է, և էջքն այնտեղից դեպի խոսքային հաստատություն ազդարարումն է նշանակման՝ որպես հանգուցավորման լեզվական և արտալեզվական աշխարհների: Խոսքային տիրույթի ամեն մի նշանակում փաստումն է լեզվական իրականության վերահաստատման՝ հենց վերանշանակման: Եթե անգամ տվյալ խոսքային իրադրության պահին լեզվական համակարգում այս կամ այն իրողության չլինելով՝ երևութանում է դեռևս չեղած խոսքային նոր ատաղծը, ապա դարձյալ սա վերանշանակում է լեզվի վերաբերմամբ, քանի որ նույն լեզվական հնարա-

23 Տե՛ս նաև **Теньер Л.**, Основы структурного синтаксиса, М., «Прогресс», 1988, էջ 117-121:

24 Տե՛ս **Балли Ш.**, Общая лингвистика и вопросы французского языка, М., «Иностранная литература», 1955, էջ 120:

վորությամբ է միայն արդյունանում այդ նորը՝ փաստելով ու վերահաստատելով լեզվի անընդհատությունը:

Ասացինք, որ լեզվում չնշանակված իմաստ չկա: Այս նշանակվածությունը կարող ենք ընդլայնելով մասնավորել ամեն մի իրողության վերաբերմամբ: Լեզվում չնշանակված բան չկա. ամենը նշանակված է: Խոսքում և խոսքով նշանակելով այս կամ այն բանը՝ վերանշանակում ենք լեզվում ոչ միայն եղածը, այլև լինելիքը, որ և փաստվում է խոսքով՝ ամեն անգամ վերածնելով լեզուն, քանի որ պատրաստի խոսքը հուշավորվելով տողորում է լեզվական համակարգի վերնուղրտի էությունը թարմասացությամբ՝ նոր ասելիքի հնարավորության մի նոր տիրույթ նվաճելով: Սա սեղմ նմանաձևումն է հին հնդկական սփոտայի ուամունքի այն մեկնության, թե վերն ամեն ինչ ասված է. այստեղ՝ վարը, մենք սոսկ կրկնում ենք: Այդ մեկնությունն օգնում է՝ նորովի ըմբռնելու լեզվում վերնուղրտից սկիզբ առնող ստորոգման էությունը: Վերնուղրտի ստորոգչի և ստորոգելիների ներհամակցված **Է**-ն իր անշարժությունից ոչ միայն սկզբնավորում է լեզվախոսքային շարժուն գործունեությունը, այլև միջնորդում է՝ «սփոտայական վերնուղրտի» անշարժ սկզբնաշարժից իրեն հասած և իրենով բեկված ասելիքը կրկնելու վարում: Վերնուղրտի գերխիտ ստորոգական բաղադրությունը հենց ստորոգական կապն է լեզվական և արտալեզվական աշխարհների: Այսպիսով՝ անշարժ սկզբնաշարժիչը լեզվական համակարգի վերնուղրտում է՝ երբեմնի միասնական **Է**-ի մեջ, որը բարձրագույն **Է**-ի արտացոլումն է լեզվի վրա, նրա առկայությունը՝ լեզվում, և որից սերում ու խոսքով նպատակային եզրակետին է հանգում ողջ լեզվանշանային գործունեությունը:

Է-ն Բարձրյալի հեքն է, Նրա հետքն է, ավելի ճիշտ՝ Նրա պահպանիչ աջն է մեր լեզվի վրա...

Դավիթ Վ. Գյուլգատյան - ունի տպագրված 35 գիտական և 3 մեթոդական հոդված: Բուհական երկու ուսումնական ձեռնարկի և մեկ մենագրության հեղինակ է: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է ընդհանուր լեզվաբանությունը, լեզվաբանական տիպաբանությունը, լեզվափիլիսոփայությունը և լեզվանշանագիտությունը:

CONCEPTUAL FIELD AND SIGNAL SPHERE

David V. Gyulzatyan (Vanadzor)

Doctor of Sciences in Philology

Key words - sign-generation, signification, significance, meaning, signification object, concept, judgment, point of signal, immobile proto-mover, activity, passivity, lingo-generation, predication, predicator, spotic hypersphere.

The language sign is signaled and the language is re-awakened in us at the moment of signification, which is still identifiable by inner speech. Signification is a signal, a signal about the existence of the sign, of a total *signedness*, of the borderlines of the sign-sphere.

The signification (sign-attribution) is the reference of a sign, by the possibility of unit selection, i.e. the freedom allowed by the inner form of the language and its encoding, to an external object. The whole sign-related activity is sign-generation, which is a simultaneous process of language generation and speech generation. Only an unfinished beginning is characteristic of language generation and that beginning is always repeated at the signaling of each speech initiation. A signal is activated immediately before beginning a speech, at least in inner speech, and by the end of the speech, it outlines a domain of signs, called **sphere of signals**, borrowed from the language system and reflected on itself.

The sphere of signals is susceptible by the language system, by the **conceptual field**, which is largely situated in, but not limited to it and in whose bounds the signal itself lies dormant as a permanent possibility. The sphere of that which is signified comprises the poles of meaning and significance: without the latter (i.e. significance), there is no existence for the former (i.e. meaning), that which forms meaning is secondary. This function of formation allows significance autonomy, meaningless significance, while “significance-free meaning” is impossible. There is no unsigned meaning because meaning is a constituent part of the sign and there is no sign deprived of significance. The verb “to have” is the common knot of the concepts of “significance” and “meaning”, that is the common attribute of these concepts is their state of activity together with the “I have” signal. Their differentiating attribute is, from the perspective of meaning, passivity, with an additional signal of expressedness, while from the perspective of significance, it is activity, with an additional signal of formedness. The sign characteristic of significance is the doubled state of activity with the same class of possession (I have) and formedness, while the sign characteristic of meaning is the states of activity and passivity with the different classes of possession (I have) and expressedness. Meaning is expressed,

significance is not expressed. Meaning has significance, significance can have a meaning. Meaning is expressed: significance can form meaning.

Sign-generation is dependent upon the co-guidance of internal form and encoding. Internal form is the channel through which the river of speech flows forward. The regulator that ensures consistency to this progression of speech flow is the encoding stemming from the language source that initiates a new beginning by pumping “the river” to opening new riverbeds, i.e. to changing the content of the inner form.

Judgment is a reunited concept of subject-predicate that had emerged by the disintegration of a uniform sign, while concept is a judgment subject to disintegration and reunification of a sign. Judgment is a breath-filled concept, a concept is a judgment that is breathless, but still apt to be breathed in.

The immobile proto-mover is in the language system, and only in its hyper-sphere, from which emerges the sign-generation of the language matter. The whole process of sign-generation is the harmonious linkings of consecutively actualizing sign elements in the intertwined domains of conceptual field and the signal sphere. The predicative beginning is in the hyper-sphere of the system, and its descent to speech expanse is the signaling of signification as a linkage of the worlds of language and extra-language.

The dense predicative composition of the hyper-sphere is the predicative linkage of the worlds of language and extra-language. The immobile proto-mover is in the hypersphere of the language system, in the once-unified **Ē/Est**, which is the reflection of the Most High **Ē/Est** upon the language, his existence in the language of which the entire activity of language signification springs forth and reaches its purpose by means of speech.

The **Ē/Est** is the breath of the Most High, His trace, or rather, His protective right-hand upon our language...

ПОНЯТИЙНОЕ ПОЛЕ И СИГНАЛЬНАЯ СФЕРА

Давид В. Гюлзатян (Ванадзор)

Канд. филол. наук

Ключевые слова - семиотическая деятельность, семиозис, сигнификация, значение, смысл, предмет сигнификации, понятие, суждение, сигнальная точка, неподвижный перводвигатель, активность, пассивность, лингвогенерация, предикация, предикатор, высшая сфера спхоты.

Лингвистический знак сигнализируется, и язык каждый раз заново пробуждается в нас с момента отчетливой семантизации внутренней речи. Сигнификация – это сигнал: сигнал существования знака, целостной знаковости и организации семиосферы.

Сигнификация – это отнесение знака к внешнему предмету возможностью выбора единиц - свободой, разрешенной внутренней формой языка и кодификацией. Вся семиотическая деятельность – это семиогенерация, которая одновременно является и лингвогенерацией, и порождением речи. Лингвогенерации свойственно только незавершенное начало, и это начало всегда повторяется сигналом порождения каждого нового речевого акта. Непосредственно перед началом речи сигнал активизируется (как минимум, в виде внутренней речи) и применяется до самого завершения речевого акта, замыкая сферу знаков, берущих начало и преломляющихся в языковой системе, которую мы именуем **сигнальной сферой**.

Сигнальная сфера, в свою очередь, обусловлена языковой системой, точнее – **понятийным полем**, расположенным большей частью в ней, но не ограниченным ею, на границе которого сигнал «дремлет» в бездеятельном состоянии постоянного потенциального воспроизводства. Сфера обозначаемого состоит из полюсов смысла и значения: без последнего невозможно существование первого, а смыслообразование переносится на второе место. Эта формирующаяся функция позволяет своевольно употреблять **бессмысленные значения**, в то время как употребление «смыслов без значений» исключается. Нет необозначенных смыслов, потому что смысл – это один из составных компонентов знака, а знаков, лишенных смысла, не существует. Общим стержнем понятий «значение» и «смысл» является глагол «имею», т. е. общим признаком становится активность сигнала **«имею»**. Их дифферен-

цирующим признаком с точки зрения смысла становится пассивность, подтвержденная сигналом выраженности, а с точки зрения значения – активность, подтвержденная сигналом формованности. Знаковой характеристикой значения является двойная активность однородных групп обладания и формирования, а знаковой характеристикой смысла становится активность-пассивность разнородных групп обладания и выраженности. Смысл выражается, а значение – нет. **Смысл имеет значение; значение может иметь смысл. Смысл выражается; значение может сформировать смысл.**

Семиогенерация находится в зависимости от совместной корреляции внутренней формы и кода. Внутренняя форма – это то русло, по которому течет и движется вперед речевая река. Стабилизатором, регулирующим закономерности этого речевого потока, является код, берущий начало в языковых истоках, который, направляя «реку» в новое русло, трансформирует внутреннюю форму и дает начало новой системе.

Суждение – это понятие, в котором воссоединены субъект и предикат, возникшие вследствие расщепления единого знака, а понятие – суждение, подлежащее расщеплению и воссоединению. Суждение – это одухотворенное понятие, а понятие – это задыхающееся, но все еще продолжающее дышать суждение.

Неподвижный перводвигатель располагается только в **высшей сфере** языковой системы, откуда берет начало семиогенерация языкового строя. Весь процесс семиогенерации – это гармоничное предикационное сцепление попеременно вибрирующих амплитуд семиотических единиц во взаимопроникаемых областях понятийного поля и сигнальной сферы. Предикационное начало расположено в высшей сфере системы, и сошествие оттуда к речевой установке является сигналом к сигнификации как развязке между лингвистическим и экстралингвистическим мирами.

Сверхплотный предикационный состав высшей сферы является именно предикационной связью между языковым и внеязыковым мирами. неподвижный перводвигатель находится в некогда едином **Е/Est**, которое является отражением абсолютного **Е/Est** в языке, его присутствием в нем: здесь генерируется и посредством речи целенаправленно устремляется к конечной точке вся лингвосемиотическая деятельность.

Е/Est - это дыхание Всевышнего, Его след, а точнее – Его оберегающая десница, подъятая над нашим языком...

REFERENCES

1. **Abrahamyan A. S.**, Nshanakyali yev nshanakich'i krknaki nerdashnakumë lezvum, «Nshan, hamakarg, haghordakts'um». Hodvatsneri zhoghovatsu`nvirvats Ēdvard At'ayani hishatakin, Yer., YePH, 2011 (**In Armenian**).
2. **Abrahamyan A. S.**, Tek'stayan taratsut'yan horizonnerë, «Vēm» hamahaykakan handes, 2016, N 3 (**In Armenian**).
3. **Abrahamyan A. S.**, Tek'sti tarberaknerë yev Răseli paradok'së, «Vēm» hamahaykakan handes, 2016, N 4 (**In Armenian**).
4. **Aghayan Ē. B.**, Ēndhanur yev haykakan baragitut'yun, Yer., Yerevani hamalsarani hrat., 1984 (**In Armenian**).
5. **Aristotel'**, Sochinenija v cheteryox tomax, t. 1, M., «Mysl'», 1976 (**In Russian**).
6. **At'ayan Ē. R.**, Lezvakan ashkharhi nerk'in kerpavorumë yev artak'in veraberut'yunë, Yer., Yerevani hamalsarani hratarakch'ut'yun, 1981 (**In Armenian**).
7. **At'ayan Ē. R.**, Nshanayin kazmavorumneri bovandakayin yev artahaytakan sherteri haraberakts'ut'yan chshtman p'ordz, «T'ezisner: Nshanagitut'yun yev lezunerı dasavandum», Yer., 1997 (**In Armenian**).
8. **Avetjan E. G.**, Semiotika i lingvistika, Jer., Izdatel'stvo Jerevanskogo universiteta, 1989 (**In Russian**).
9. **Balli Sh.**, Obsh'aja lingvistika i voprosy francuzskogo jazyka, M., «Inostrannaja literatura», 1955 (**in Russian**).
10. **Frege G.**, Logika i logicheskaja semantika: Sbornik trudov. Uchebnoje posobije dlja studentov vuzov, M., «Aspekt Press», 2000 (**In Russian**).
11. **Gegel' G. V. F.**, Enciklopedija filosofskix nauk, t. 1, Nauka logiki, M., «Mysl'», 1974 (**In Russian**).
12. **Gegel' G. V. F.**, Fenomenologija duxa, «Nauka», M., 2000 (**In Russian**).
13. **Gumbol'dt V. fon**, Izbrannyje trudy po jazykoznaniju, M., «Progress», 1984 (**In Russian**).
14. **Gyulzatyan D. V.**, K'erakanakan kargerı hamateghumë storogman mej, Hayerenagitakan mijazgayin tasnerord gitazhoghov, 7-9 hoktemberi, 2015 t', «Zekuts'umnerı zhoghovatsu», Yer., HH GAA «Gitut'yun» hrat., 2015 (**In Armenian**).
15. **Jahukyan G. B.**, Hayots' lezvi zargats'umë yev karuts'vatsk'ë, Yer., «Mitk'» hrat., 1969 (**In Armenian**).
16. **Stepanov Ju. S.**, Osnovy obsh'ego jazykoznanija, M., «Prosvesh'enije», 1975 (**In Russian**).
17. **Ten'er L.**, Osnovy strukturnogo sintaksisa, M., «Progress», 1988 (**In Russian**).